ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-51-79

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25 » դեկտեմբերի 2014 թվականի N 46-Ն

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8 հոդվածի, 10 հոդվածի, 11 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

46 --Ն

Հաստատել համայնքի տարածքում 2015թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

2/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

բ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 7000 դրամ:

գ/ 1001- ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 10000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

դ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

ե/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության համար տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ.

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված

նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3/ նախատեսվում է միայն կառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ Ոգելից խմիչքի և ալկոհոլային վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար 9000 դրամ:

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնակա շինությունների ներսում կազմակերպման դեպքում թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է 9000 դրամ:

5. Համայնքի տարածքում

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է. յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ

2/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 160000 դրամ:

3/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000դրամ:

6 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է- 500 դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի,հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար --- 50000 դրամ:

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ-ի տեղական տուրք սահմանվում է՝

ա/ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000դրամ.

բ/թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000դրամ.

գ/այլ արտաքին գովազդի համար՝ 1000դրամ.

ե/դատարկ գովազդային վահանակների ոամար՝ 700դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 10000 դրամ:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաստատվել է 0,5 գործակիցը կիրառված:

10. Տեղական վճարներ.

ա/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է – 1000 դրամ:

բ/ համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է – 500 դրամ:

գ/ համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանվում է - 500 դրամ:

դ/ համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանվում է .
դա/ կենցաղային աղբի համար համայնքում բնակվող յուրաքնչյուր բնակչի համար սահմանվում է --- 150 դրամ
դբ/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար սահմանվում է --- 500 դրամ
ե/ շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և տեղափոխման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ --- 100 դրամ

կողմ / 7/ դեմ / 0/ ձեռնպահ / 0 /

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ

ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Թ.ԳՐԻԳՈՐՅԱՆ